

**Իրինե Շուքիթիձե**

Քաղաքացիական ինտեգրման և  
ազգամիջյան փոխհարաբերությունների կենտրոն

**ԸՆՏԱՆԻՔԻ ԳՈՐԾՈՆԸ ԵՐԿԼԵԶՈՒ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՇՄԱԿԵՐՏՆԵՐԻ  
ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՀԱԶՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ**

**ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ**

Հողվածում ներկայացված է ընտանիքի/ծնողների դերը կրթական գործընթացում, մասնավորապես երկլեզու կրթության գործընթացում: Գոյություն ունեն մի քանի կարևորագույն գործոններ, որոնք շատ մեծ ազդեցություն ունեն երեխայի կոգնիտային-հոգեբանական և ակադեմիական զարգացման վրա. ծնողների կրթությունը, նրանց աշխարհայացքը, սպասումներն իրենց զավակների կրթության նկատմամբ, նրանց օժանդակելը, ինչը ենթադրում է կրթության համար համապատասխան միջավայրի ստեղծում, կարգապահություն ընտանիքում, նրանց ընդգրկվածության աստիճանը ուսանման գործընթացում, ինչը ենթադրում է ուսուցիչների հետ համագործակցություն, երեխաների հետ բարեկամական հարաբերություն, տնային առաջադրանքի պատրաստման ընթացքում նրանց մասնակցություն: Սա այն պատճառների ոչ լրիվ ցանկն է, որը նշանակալիորեն սահմանում է կրթության որակը: Ընտանիքը կարող է իր բաժին պատասխանատվության ընդունումով հեշտացնել ուսանում-ուսուցման գործընթացը և այն հետաքրքիր դարձնել ինչպես իր երեխայի, այնպես էլ ուսուցչի համար: Հողվածում աշխատել ենք օտար երկրի փորձի և հետազոտությունների օրինակով քննարկել ծնողի դերը երկլեզու կրթության գործընթացում, քանի որ երկլեզու ծրագրերը Վրաստանում դեռևս փորձարկման գործընթացում են, և այս տեսակետից գոյություն չունեն խորքային հետազոտություններ, որոնք մեզ կտային միանշանակ եզրակացություններ անելու հնարավորություն:

**Ներածություն**

Հաճախ ենք խոսում ուսուցման գործընթացում ուսուցչի դերի մասին, գրվում են բազմաթիվ գրքեր թե հողվածներ, բազմաթիվ վարժանքներ են անցկացվում ինչպես դպրոցի մանկավարժների, այնպես էլ դպրոցի վարչարարների համար: Անվիճելի է, որ կարևոր է նրանց դերը ինչպես ընդհանրապես կրթության գործընթացում, այնպես էլ երկլեզու կրթության ներդրման ժամանակ, թեպետ սրան զուգահեռ չպետք է անտեսենք **ծնողի դերը**, ինչը ոչ պակաս կարևոր է կրթական գործընթացում: Առաջադեմ կրթական համակարգը հենց ուսուցչի, ծնողի և երեխայի արդյունավետ համագործակցության արդյունքն է: Ծնողի

կողմից սեփական պատասխանատվության լրիվ գիտակցումը և ընդունումը, ինչպես նաև որակյալ ուսուցիչը սահմանում են աշակերտի ակադեմիական հաջողությունը: Ծնողի դերն էլ ավելի կարևոր է երկլեզու կրթության գործընթացում: Չնայած երկլեզու կրթության հրատապությանը, ոչ միայն Վրաստանում, այլև ամբողջ աշխարհում դեռևս գոյություն չունի մեկ բացատրություն, որն ամբողջությամբ կսահմանի երկլեզու կրթության էությունը և նշանակումը, այս անորոշությունը ևս մեկ պատճառ է ծնողների շփոթության, առանց այն էլ շատ քիչ տեղեկատվության պայմաններում: Գոյություն ունեն որոշակի վախեր և

հարցեր, որ լսվում են փոքրամասնությունների ծնողների կողմից, որոնք կանգնած են երկրնտրանքի առջև, թե իրենց երեխաներին տանեն երկլեզու դպրոց, որտեղ նրանք մայրենի լեզվի հետ կսովորեն պետական լեզուն, տանեն դպրոց, որտեղ միայն մայրենի լեզվով կսովորեն, թե՞ դպրոց, ուր ուսուցման լեզուն պետական լեզուն է: Այս վախերը և սնահավատությունը, որ կապվում են երկլեզու կրթության հետ բխում են ծնողների պակաս տեղեկացվածությունից, ինչպես ընդհանրապես երկլեզու կրթության, այնպես էլ նրա առավելության մասին: Հողվածում կփորձենք քննարկել այն հիմնական հիմնախնդիրները, որ գոյություն ունեն՝ կապված ծնողների ընդգրկվածության հետ և Վրաստանում ստեղծված իրավիճակը 2006 թվականից մինչև օրս, ըստ այն փոքրամասշտաբ հետազոտությունների, որոնք ընդհանրապես արտացոլում են Վրաստանում երկլեզու կրթության ներդրման գործընթացը:

**Ծնողի դերը կրթության գործընթացում**

Երկլեզու կրթությունը դեռևս նորություն է ինչպես ծնողների, այնպես էլ ուսուցիչների, դպրոցի վարչարարների և ընդհանրապես ողջ բնակչության համար: Մա այնքան բարդ և բազմակողմանի երևույթ է, որ տարիներ և հսկայական ռեսուրս է անհրաժեշտ նրա համապատասխանաբար իրականացման համար, որպեսզի արդյունքը դրական լինի: Բազմաթիվ վարժանքներ և սեմինարներ այս կամ այն չափով ապահովել են նորության հասցնելը հասարակությանը, ծնողներին ևս այս կամ այն չափով տեղեկություններ մատուցվել են, թեպետ դա բավական չէ, առանձնապես տարածաշրջաններում, որտեղ, ի տարբերություն մեծ քաղաքների և շրջկենտրոնների, առանց այն էլ որոշակի տեղեկատվական վակուում է և կրթության համեմատաբար ցածր մակարդակ: Մա տարածվում է նաև էթնիկական փոքրամասնություններով հոծ բնակեցված տարածաշրջանների վրա, որտեղ

տեղեկատվության սակավությանն ավելանում է բնակչության ցածր լեզվական իրազեկությունը պետական լեզվից, ինչն, ինքնըստինքյան, տեղեկատվական մեկուսացման ևս մեկ նշանակալի գործոններից է:

Հաճախ չի ստացվում ծնողներին համապատասխանաբար ծանոթացնել բոլոր այն նորությունները և առավելությունները, որ ունի երկլեզու կրթությունը, ինչն, իր հերթին, խափանում է երկլեզու կրթության արդյունավետ իրականացման գործընթացը: Ծնողների մեծ մասը չի գիտակցում պետական լեզվի ուսուցման առավելությունը և կարևորությունը իրենց զավակի ինտեգրման և ընդգրկվածության համար հասարակական գործունեության ցանկացած բնագավառում, ծնողները չեն գիտակցում, թե որքան կարևոր է պետական լեզուն բարձրագույն կրթություն ստանալու, ապագա զբաղվածության և ընդհանրապես երեխայի, որպես ակտիվ քաղաքացի ձևավորման համար (Բեյկեր, 2007):

Հետաքրքիր է, թե ո՞ր գործոններն են պայմանավորում ծնողի խանգարիչ դերն ուսումնական գործընթացում: Փոքրամասնությունների ծնողների բացասական վերաբերմունքները դումինանտ մշակույթի, լեզվի և ժողովրդի նկատմամբ իր արտացոլումն է գտնում նաև երեխայի աշխարհայացքի ձևավորման վրա: Երբեմն ծնողները մտածում են, որ երկլեզու կրթության ժամանակ իրենց զավակը կընկալվի որպես հատուկ կրթական անհրաժեշտությամբ աշակերտ, և դա կառաջացնի նրա սեգրեգացիա, նրան դուրս կմղի ուսումնական գործընթացից: Հիմնախնդրից խուսափելու համար՝ ծնողների մի մասը գերադասում է իր երեխային տանել այն դպրոց, որտեղ երեխան միայն մայրենի լեզվով կստանա կրթություն, կամ երկրորդ ծայրահեղությունն է այնպիսի հանրային դպրոց ընտրելը, որտեղ միայն պետական լեզվով է ընթանում ուսումնական գործընթացը: (Պուզլիեսե, 2010):

Ընդհանրապես շատ է խոսվել և գրվել կրթական գործընթացում ծնողի դերի և անհրաժեշտության մասին, թեպետ երկլեզու կրթությունն իր էությամբ անհամեմատ ավելի բարդ երևույթ է, քան միայն մայրենի լեզվով կրթություն ստանալը, այդ պատճառով ծնողի դերը ևս առանձնահատուկ է երկլեզու/բազմալեզու ծրագրերի իրականացման գործընթացում: Փորձարկման նախնական փուլում պետական լեզվի չիմացության պատճառով ստեղծված տեղեկատվական վակուումը նշանակալի նախապայման էր ստեղծում երկլեզու կրթության նկատմամբ բացասական վերաբերմունքի ձևավորման համար: Աշխարհի տարբեր երկրներում անցկացված հետազոտություններն ապացուցում են, որ ծնողի դերը և ընդգրկվածությունը կրթական գործընթացում նույնչափ կարևոր են, ինչպես որակյալ ուսուցիչը: Ծնողի ընդգրկվածությունը կարող է տարբեր ձևերով դրսևորվել: Իսկ ամենակարևոր գործոններից մեկը ծնողի և ուսուցչի **համագործակցությունն է**, առանձնապես, երբ գործը վերաբերում է երկլեզու/բազմալեզու կրթությանը էթնիկական փոքրամասնությունների համար:

Ոչինչն այնպես չի օգնում երեխային կրթական գործընթացում հաջողության հասնելու մեջ, ինչպես ծնողի և ընտանիքի ընդգրկվածությունը և աջակցումը: Ծնողների անտարբերությունը և աջակցության պակասն արտացոլվում է երեխայի ակադեմիական հաջողության վրա, այդ պատճառով էլ կարևոր է, որ ծնողները տիրապետեն լիարժեք տեղեկատվության կրթական գործընթացում իրենց դերի կարևորության վերաբերյալ:

Ծնողների մեծ մասը միայն ցանկություն ունի, որ իր զավակը հաջողակ լինի, իսկ իր դերը ոչ կարևոր է համարում և հաճախ անհաջողությունների պատճառը փնտրում է ուսուցչի, դպրոցի, հենց երեխայի, միջավայրի մեջ: Անվիճելի է, որ բոլոր այս թվարկված գործոնները շատ

կարևոր են, թեպետ ծնողի դերն այդ թվում ամենակարևոր նախապայմանն է հաջողության համար: Դպրոցում, այնպես, ինչպես կյանքում, մշտական աջակցությունը ծնողների կողմից կարևորագույն նախապայմանն է աշակերտների վստահության և բարյացակամ վերաբերմունքի ձեռքբերման համար: Գոյություն ունեն մի քանի գործոններ, որ պայմանավորում են երեխայի հաջողություն կրթության մեջ և ընդհանրապես նրա, որպես անհատ ձևավորման գործընթացում:

Ծնողները համապատասխանաբար պետք է գնահատեն իրենց զավակների հնարավորությունները և դրա նախատեսմամբ պլանավորեն նրա կրթությունը և ապագան: Առանձնահատուկ ուշադրություն պետք է տրամադրեն երեխաներին, որոնք հեշտությամբ չեն կարող հասնել ակադեմիական հաջողության: Բոլոր փուլերում կարևոր է ծնողների աջակցությունը, այն դեպքում, երբ երեխան ունի որոշակի բացթողումներ և անհաջողություն: Աջակցությունն առանձնահատուկ կարևորություն է ձեռք բերում դպրոցի տարրական աստիճանում գտնվող երեխայի համար, որը հարմարվում է նոր միջավայրին և կանոններին: Նաև յուրաքանչյուր հաջողություն, որքան էլ այն աննշան լինի, պետք է ընդունվի ծնողի կողմից:

Գրել-կարդալու կարողությունների զարգացումը, մաթեմատիկական և տարբեր բարդ առարկաներ այն դժվարությունների լրիվ ցանկը չէ, որոնց հանդիպում է երեխան դպրոցում: Հնարավոր է, նրանք հիմնախնդիրներ ունենան ուսուցիչների, համադասարանցիների, կամ, ուղղակի հասակակիցների հետ: Երբեմն նրանց ուղղակի անհրաժեշտ է, ի դեմս ծնողի, ունենալ ընկեր, ում հետ նրանք կկիսվեն իրենց կարծիքներով, նրանցից կստանան խորհուրդներ և աջակցություն:

Ուսանման գործընթացում առկա դժվարությունները և սթրեսն ավելի են բարդանում ծնողի և երեխայի օտարացումից, շփման պակասությունից,

ինչն առաջացնում է երեխայի ինքնամփոփություն: Ծնողի և երեխայի հարաբերությունը առավելապես արտացոլվում են երեխայի՝ ուսման նկատմամբ տրամադրվածության վրա:

Անհրաժեշտ է, որ ծնողը գիտակցի իր բաժին պատասխանավորությունը ուսուցչի հետ մեկտեղ: Ծնողի կողմից իր պատասխանատվության ընդունումը առանձնապես կարևոր է մեծաքանակ դասարանում կամ այնպիսի դպրոցում, որտեղ ուսուցման հիմնական լեզուն երեխաների մայրենի լեզուն չէ:

Անհրաժեշտ է, որ ծնողները մասնակցեն երեխաների տնային առաջադրանքների պատրաստմանը, ըստ հնարավորինս պետք է օգնեն, որ զվարճալի և հետաքրքիր դառնա տանն աշխատելու գործընթացը, և տնային առաջադրանքի կատարումը երեխայի համար չվերածվի պատժիչ միջոցառման: ([http://math-and-reading-help-for-kids.org/articles/A\\_Parent%27s\\_Role\\_in\\_Education.html](http://math-and-reading-help-for-kids.org/articles/A_Parent%27s_Role_in_Education.html)):

Ուսուցչի ակդեմիական հաջողությունն առավելապես սահմանվում է կրթական գործընթացում ծնողի և ընտանիքի դերով: Հաճախ ծնողներն ունեն ցանկություն՝ օգնել երեխաներին պատրաստելու դասերը, թեպետ չունեն համապատասխան իրազեկություն, առանձնապես այս դեպքում է կարևոր դպրոցի և ընտանիքի համագործակցությունը՝ առկա վակուումի հաշվեկշռման համար:

Երբ ծնողն իր բաժին պատասխանատվությունն ընդունում է, երեխաները պակաս են ունենում ուսման հետ կապված հիմնախնդիրներ, դպրոցը նրանց համար դառնում է սիրելի վայր, որտեղ իրականացնում են իրենց հնարավորությունները, և ուսումնական գործընթացը նրանց համար դառնում է հետաքրքիր: (Վեյս, Խասպե, Լոպես, 2006):

Հետաքրքիր և ուշագրավ է 2006-2009 թվականներին PISA-ի կողմից անցկացված հետազոտման արդյունքը, որը առանձնապես հստակ ընդգծում է ծնողի դերը երեխայի գրագիտության մակարդակի

զարգացման համար: Այս հետազոտությունն անց էր կացվում ողջ աշխարհում 15 տարեկան դեռահասների մեջ գրագիտության մակարդակի որոշման համար, որի հետևանքով բացահայտվել է, որ 15 տարեկան դեռահասների մեջ նրանց գրագիտության մակարդակն է բարձր, որոնց համար ծնողները հաճախ էին տարրական աստիճանում կարդում և ակտիվորեն մասնակցում նրանց զարգացմանը, քան այն աշակերտների գրագիտության մակարդակը, որոնց համար ծնողները հազվադեպ էին ընթերցում կամ համարյա չէին ընթերցում և պակաս էին ընդգրկված նրանց զարգացման մեջ ([http://www.pisa.oecd.org/pages/0,2987,en\\_32252351\\_32235731\\_1\\_1\\_1\\_1\\_1\\_00.html](http://www.pisa.oecd.org/pages/0,2987,en_32252351_32235731_1_1_1_1_1_00.html)):

### **Ծնողների վերաբերմունքները երկլեզու կրթության նկատմամբ Վրաստանում**

Փոքրամասնությունների կրթության հարցը հրատապ է առանձնապես այսօր, երբ Վրաստանի կրթության և գիտության նախարարությունն ակտիվորեն իրականացնում է էթնիկական փոքրամասնությունների ինտեգրում կրթության միջոցով, ոչ վրացալեզու դպրոցներում վերջին տարիների ընթացքում տեղի է ունենում երկլեզու/բազմալեզու կրթության ներդրում ամբողջ Վրաստանի մասշտաբով, առանձնապես կրթության որակի բարելավում, ինչը ծառայում է փոքրամասնությունների իրավունքների ճանաչմանը և պաշտպանությանը, նրանց ակտիվ ընդգրկմանը երկրի սոցիալ-քաղաքական և մշակութային կյանքին, ժողովրդավարության և խաղաղ զարգացման գործընթացին: Տվյալ ինտեգրման գործընթացում ծնողի ակտիվությունը, ընդգրկվածությունը, նրա դիրքորոշումը և վերաբերմունքները երկլեզու կրթության նկատմամբ կարող են դրական կամ բացասական ազդեցություն ունենալ նորության ներդրման գործընթացում, իսկ վտանգը համապատասխանաբար պետք է գնահատվի, որպեսզի

համապատասխանաբար արձագանքեն՝ վտանգից խուսափելու համար, ինչը ենթադրում է ծնողների խանգարող գործոնը երկլեզու կրթության իրականացման գործընթացում:

Ընդհանրապես կրթական գործընթացում ծնողի դերի և ընդգրկվածության անհրաժեշտության մասին շատ է խոսվել և գրվել, թեպետ երկլեզու կրթությունն իր էությունը անհամեմատ բարդ երևույթ է, քան միայն մայրենի լեզվով կրթություն ստանալը, այդ պատճառով ծնողի դերը ևս առանձնահատուկ է երկլեզու/բազմալեզու ծրագրերի իրականացման գործընթացում:

Մարդիկ սովորաբար ունեն վախ և բացասական վերաբերմունք ամեն նորության նկատմամբ, որ մուտք է գործում նրանց կյանք: Այսպես էր երկլեզու/բազմալեզու կրթության նախնական փուլում, երբ 2006-2007 թվականներին տեղական նախաձեռնությունների հիման վրա շվեյցարական մի ոչ կառավարական կազմակերպության՝ CIMERA-ի կողմից ԵԱՀԿ ազգային փոքրամասնությունների գերագույն հանձնակատարի ֆինանսական աջակցությամբ Սամցխե-Չավախքում և Քվեմո Քարթլիում սկսվել է երկլեզու կրթության ներմուծում և Վրաստանի ոչ վրացալեզու բնակչությանը հոծ բնակեցված տարածաշրջանների մի քանի դպրոցում (սկզբից 12 փորձարկային դպրոց կար Սամցխե-Չավախքում և Քվեմո Քարթլիում) փորձարկում: Պետական լեզու սովորելը երկլեզու կրթության միջոցով ծնողներն ընկալում էին որպես ձուլման վտանգ: Նրանք համարում էին, որ պետական լեզու սովորելն իրենց տարածաշրջանում անհրաժեշտություն չէր: Ծնողները բացասական վերաբերմունք ունեին այն նորության նկատմամբ, որի ոչ էությունը, ոչ էլ նշանակումը նրանց հայտնի չէր: Աստիճանաբար տեղի նորությունը ծանոթացրին ծնողներին: Երկրում ընթացող սոցիալ-քաղաքական գործընթացները, որոնք երկրի բոլոր


քաղաքացիների համար պարտադիր դարձրին պետական լեզվի իմացությունը, իրենց հերթին, նպաստեցին ծնողների մոտ դրական վերաբերմունքի ստեղծմանը՝ երկլեզու կրթության միջոցով պետական լեզվի ուսուցման նկատմամբ: 2007 թվականի հաշվետվության մեջ, որն արտացոլում է դեպի երկլեզու կրթությունն արված առաջին քայլերը, արդեն ծնողների վերաբերմունքները նորության նկատմամբ դրական են նախորդ տարիների համեմատ, նրանք ավելի են համագործակցում դպրոցի հետ և ավելի են ընդգրկված ուսումնական գործընթացի մեջ (Գրիգուլե, Պերինի, 2007):

Չի կարելի չնշել նաև 2009-2011 թվականներին ոչ կառավարական կազմակերպության՝ «Քաղաքացիական ինտեգրման և ազգամիջյան փոխհարաբերությունների կենտրոնի» կողմից իրականացված «Ազգային փոքրամասնությունների կրթական իրավունքների պաշտպանությունը երկլեզու կրթության միջոցով» նախագիծը, որի շրջանակներում կազմվել են և հրատարակվել բրոշյուրներ վրացերեն, հայերեն և ադրբեջաներեն: Նախագիծը ֆինանսավորվել է Եվրամիության կողմից և նպատակ ուներ տվյալ բրոշյուրների և զանազան ակտիվությունների միջոցով ծնողների և ընդհանրապես ոչ վրացալեզու բնակչության տեղեկացում երկլեզու կրթության և նրա առավելությունների մասին Սամցխե-Չավախքի և Քվեմո Քարթլիի տարածաշրջաններում ([www.cciir.ge](http://www.cciir.ge) <<http://www.cciir.ge>> ):

2011 թվականի հունվար-փետրվարին անցկացված հետազոտությունների համաձայն, կրթության և գիտության նախարարության կողմից երկլեզու կրթության փորձարկման համար ընտրված 23 դպրոցում ոչ վրացալեզու դպրոցների տնօրենների խոսքերով, ծնողների դիմադրությունը և բացասական վերաբերմունքները շատ աննշան են և այլևս խանգարիչ գործոն չեն հանդիսանում երկլեզու կրթության իրականացման համար, ի տարբերություն մի քանի տարի

ათაღქმის პირობებში, ხელოვნების განხორციელების არსებობის მხრიდან

19. ბილინგუალური პროგრამის განხორციელების არსებობის მხრიდან




პასუხი არ გასცა	სრულიად ვეთანხმები	ვეთანხმები	არ ვეთანხმები	სრულიად არ ვეთანხმები
0	4,3	0	56,6	39,1

სწავლის ხარისხის გაუმჯობესების მიზნით, ხელოვნების განხორციელების არსებობის მხრიდან

ბილინგუალური პროგრამის განხორციელების არსებობის მხრიდან

20. მშობლების უმეტესობა ნეიტრალურია სიხლის მიმართ



პასუხი არ გასცა	სრულიად ვეთანხმები	ვეთანხმები	არ ვეთანხმები	სრულიად არ ვეთანხმები
0	4,3	21,7	61	13

### Եզրակացություն

Կրթությունը բազմակողմանի և բարդ գործընթաց է, որի հաջողությունն էլ պայմանավորում է ընտանիքի, դպրոցի և երեխայի համագործակցությունը: Ուսուցչի, դպրոցի, միջավայրի դերը շատ կարևոր է երեխայի կրթության գործընթացում, թեպետ ծնողի ճիշտ ընտրությունը և նրա ընդգրկվածությունը սահմանում են հաջողությունը կրթության տարրական փուլում, ինչը ամենակարևոր աստիճանն է երեխայի կյանքում: Դպրոցի վարչարարները, կրթության մասնագետները և, իհարկե, ինքըստինքյան նաև ծնողների մեծ մասը խոստովանում է, որ ընտանիքի աջակցությունը կարևորագույնն է ակադեմիական հաջողության համար ուսուցման ցանկացած աստիճանում: Իսկ այս դերն առանձնահատուկ ծանրաբեռնում է ձեռք բերում երկլեզու կրթության պայմաններում, քանի որ ի տարբերություն միակեզու կրթության, երեխաները հանդիպում են անհամեմատ ավելի մեծ դժվարությունների և դիմադրության, ինչի հաղթահարման համար մեծ նշանակություն է շնորհվում ծնողների աջակցությանը:

Կարծում ենք, լավ կլինի այս տեսակետից հետևել օտար երկրների փորձին և ընդունել նրանց հաջողությունները, ինչն արտահայտվում է ծնողների և ուսուցիչների տարբեր միավորումների ձևավորման մեջ, ինչը կրթական գործընթացում ակտիվորեն կազդի ծնողների դերի և ընդգրկվածության աճման վրա ողջ երկրի մասշտաբով: Նման մոտեցումը կօգնի ծնողներին կրթական գործընթացում իրենց դերի էլ ավելի

բարձրացման հարցում և նաև գիտակցելու իրենց պատասխանատվությունը այս շատ բարդ և բազմակողմանի գործընթացում, որ կրթությունն է:

### Երաշխավորություններ.

- Հաճախ պետք է անցկացվեն տեղեկատվական-ճանաչողական բնույթի հանդիպումներ ծնողների հետ:
- Պետք է տեղի ունենա ընտանիքի և դպրոցի ակտիվ համագործակցություն:
- Անհրաժեշտ է, որ ծնողները տեղեկացվեն, թե որքանով կարևոր է իրենց դերը և ընդգրկվածությունը երեխաների ակադեմիական հաջողության մեջ:
- Անհրաժեշտ է ժամանակին և ճիշտ տեղեկություններ մատուցել էթնիկական փոքրամասնությունների ծնողներին երկլեզու կրթության էության և նշանակման, նրա առավելության և վտանգների մասին:
- Պարտադիր է ծնողների տեղեկացված լինելը պետական լեզվի ուսանման անհրաժեշտության և կրթության միջոցով նրանց զավակների ինտեգրման կարևորության մասին:
- Դպրոցի վարչարարներն ավելի պետք է ընդգրկեն ծնողներին ուսուցման գործընթացի մեջ, պետք է ապահովեն տեղեկատվական հանդիպումներ, յուրաքանչյուր նորության ծանոթացման նպատակով, և նրանց հետ կայացնեն որոշում այնպիսի կարևոր հարցերի վերաբերյալ, որ վերաբերում է նրանց զավակների կրթությանը:

**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Baker 2007 – C., Baker A Parents’ and Teachers’ Guide to Bilingualism (third edition) [http://books.google.ge/books?id=Tg0K-0rShfEC&printsec=frontcover#v=one page&q&f=false](http://books.google.ge/books?id=Tg0K-0rShfEC&printsec=frontcover#v=one%20page&q&f=false)

Jillian K. Pugliese 2010 - Parents Attitudes Towards Bilingual Education Programs and Policy. 2010, May, [http://www.acsu.buffalo.edu/~jkp3/Parental Attitudes\\_BilingualEducation.pdf](http://www.acsu.buffalo.edu/~jkp3/Parental Attitudes_BilingualEducation.pdf)

Weiss, Caspe, Lopez 2006 – H.B. Weiss, M. Caspe & E Lopez, Family Involvement in Early Childhood Education, 2006, [http://www.pisa.oecd.org/pages/0,2987,en\\_32252351\\_32235731\\_1\\_1\\_1\\_1\\_1,00.html](http://www.pisa.oecd.org/pages/0,2987,en_32252351_32235731_1_1_1_1_1,00.html); [http://math-and-reading-help-for-kids.org/articles/A\\_Parent% 27s\\_Role\\_in\\_Education.html](http://math-and-reading-help-for-kids.org/articles/A_Parent%20s_Role_in_Education.html)

Շուրիթիձե, 2011 - «Երկլեզու կրթություն» ամսագիր, 2011 թ., №6.  
[www.bilingualeducation.ge](http://www.bilingualeducation.ge)  
[www.cciir.ge](http://www.cciir.ge)

**Irine Shubitidze**

**Family factors and students’ achievement in bilingual education**

**ABSTRACT**

The article highlights a role of parent in education process with emphasis on context that is common for bilingual education. There’re several factors that impact child’s cognitive and psychological development and academic achievements: educational background of parents, their world view, attitudes and assumptions, expectations towards the education progress of their kid, support that ensures appropriate learning environment, family context, degree of engagement in learning process of own child, cooperation with teachers, relationship patterns with own child. This is an incomplete list of the conditions that determine the quality of education. While taking responsibility, the parent assists to cohesive flow of teaching and learning processes, raise of motivation of the child and his/her teacher. The article will review the best cases from the world practices and discusses an actual situation in Georgia.